«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 10.08.2018թ. ժամը 13:00

Համաձայն ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի տնօրեն Լ.Աղլամազյանի, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 12.07.2018թ-ին և 19.07.2018թ-ին ստացված թիվ Մ66 և Մ77դիմումները,ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,կառավարչի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Օգոստոսի 10-ին ժամը 13.00-ին-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի տնօրեն Լ.Աղլամազյան
ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Նիստի հրավիրման տեղի,օրվա և ժամի մասին՝ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանին,փոստային ծառայության միջոցով 18.07.2018թ-ին ուղարկված ծանուցման,ստացման վերաբերյալ ծանուցագիրը դեռ չի ստացվել ուստի կլառավարչի ներկա չգտնվելը ամենայն հավանականությամբ պայմանավորված է տեղյակ չլինելու փաստով:

Դիմումատու ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի տնօրեն Լ.Աղլամազյան պատշաճ ծանուցված է նիստի տեղի և ժամի վերաբերյալ,բայց անհայտ պատճառով չի ապահովվել իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը:

Հանձնաժողովի նախահն տեղեկացրեց այդ մասին նիստի մասնակիցներին և առաջարկեց հայտնել կարծիքներ նիստը առանց դիմումատուի և սնանկության գործով կառավարչի սկսելո վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին ստեղծված իրավիճակը և ճշտելով հանձնաժողովի նախագահից որ կառավարչի կողմից ներկայացված նյութեր նույնպես առկա չէն առաջարկեցին հետաձգել հանձնաժողովի նիստը այլ հերթի, կառավարչին պատշաճ ծանուցում և ներկայությունը ապահովելու համար:

Հանձնաժողովի նախագահն առաջարկությունը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի տնօրեն Լ.Աղլամազյանի, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝.07.2018թ-ին և 19.07.2018թ-ին ստացված թիվ Մ66 և Մ77դիմումները,ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումներում նշված փաստական հանգամանքների քննության համար 2018թ-ի Օգոստոսի 10-ին ժամը 13.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը հետաձգել և նշանակել 30.08.2018թ-ին ժամը 15.00-ին, ք.Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ, հասցեում:

2.Հանձնաժողովի քարտուղարին ապահովել կողմերին պատշաճ ծանուցում,հանձնաժողովի նիստի վայրի և ժամի մասին:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան